ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԳՏՆՎԵԼ Է ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

22.11.2023 16:18



ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը և փաստաբան Մարտուն Փանոսյանը եռօրյա աշխատանքային այցով գտնվել են Ֆրանսիայի Հանրապետությունում:

Հայաստանի պատվիրակությունը Ֆրանսիայի Օ դը Սեն քաղաքի փաստաբանների պալատի նախագահ Իզաբել Կլանե Դի Լամանիի հրավերով մասնակցել է Օ դը Սենի փաստաբանների պալատի ամենամյա ամփոփիչ միջոցառմանը, որի շրջանակներում քննարկվել են պատերազմների ժամանակ մարդկանց իրավունքներին և այդ պայմաններում փաստաբանական գործունեությանն ուղղված մարտահրավերներին վերաբերելի խնդիրներ:

Միջոցառմանը մասնակցել են փաստաբանների պատվիրակություններ Հայաստանից, Մոլդովայից, Ռումինիայից և այլ երկրներից:

Ֆրանսիացի բազմահազարանոց փաստաբանների մասնակցությամբ միջոցառումը մեկնարկել է հայազգի դուդուկահար Լևոն Մինասյանի երաժշտական կատարմամբ, իսկ միջոցառման առանցքային հյուր է համարվել ֆրանսահայ կոմպոզիտոր Անդրե Մանուկյանը:

Հայաստանի պատվիրակությունը, հրավիրյալ այլ երկրների ներկայացուցիչների հետ համատեղ, քննարկել է փաստաբանությանն առնչվող մի շարք առանցքային հարցեր, որի ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը հանդես են եկել ելույթներով: Միջազգային հարթակում ներկայացվել են նաև Արցախի մեր հայրենակիցների նկատմամբ Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության, արցախցիների իրավունքների հետ կապված խնդիրները:

Օ դը Սենի փաստաբանների պալատի նախագահը և փոխնախագահը ներկաներին պատմել են Արցախի շրջափակման և արցախցիների բռնի տեղահանման մասին:

Հայաստանի փաստաբանների պալատի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Փարիզի փաստաբանների պալատի նախագահի և այլ ներկայացուցիչների հետ, ինչպես նաև այցելել է Ֆրանսիայի ամենախոշոր փաստաբանական

գրասենյակներից «CMS Francis Lefebvre»-ն, որն ունի նաև միջազգային ցանց:

Հիշեցնենք, որ ֆրանսիացի մեր գործընկերներն ավելի վաղ՝ 2023 թվականի ապրիլի 23-ին՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում, հայ գործընկերների ուղեկցությամբ այցելել են Սյունիքի մարզ: Դա այն օրն էր, երբ ադրբեջանցիները փակել էին Հակարիի կամուրջը՝ Հայաստանն Արցախին կապող վերջին, այլընտրանքային ճանապարհը, և ֆրանսիացի մեր գործընկերներն ականատես եղան Արցախի վերջնական շրջափակմանը, հետո նաև՝ հայրենիքից արցախցիների բռնի տեղահանմանը:





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })